



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 685101 .13 .04 201 Կր.

ՔՆՆԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳՐՈՒՄ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՍՈՎՈՐՈՂԻՆ՝ ԻՐ ՍՏԱՑԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԻ ՄԱՍԻՆ ԻՐԱԶԵԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի ուսումնական գործընթացի պատշաճ կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով՝

հրամայում եմ.

1. Սահմանել, որ.

1.1. Տվյալ առարկան դասավանդող դասախոսը պարտավոր է սովորողին իրազեկել քննական տեղեկագրում նշանակված քննության գնահատականի մասին:

Բանավոր քննության դեպքում դասախոսը քննական տեղեկագրում գնահատականը նշանակում և սովորողին տեղեկացնում է մինչև նրա լսարանից դուրս գալը:

Գրավոր քննության դեպքում դասախոսը քննական տեղեկագրում գնահատականը նշանակում և սովորողին տեղեկացնում է սահմանված ժամկետում աշխատանքը ստուգելուց անմիջապես հետո:

1.2. Առարկան դասավանդող դասախոսի կողմից, առանց հարգելի (հիմնավոր) պատճառների քննական տեղեկագրում կամ սովորողի ստուգման գրքույկում սխալ գնահատական նշանակելը դիտակվելու է որպես սահմանված կարգի կոպիտ խախտում և առարկան դասավանդող դասախոսի նկատմամբ կիրառվելու է կարգապահական տույժ՝ ընդհուպ մինչև համալսարանից հեռացումը:

2. Սույն հրամանի մասին տեղեկացնել ԵՊՀ գիտամանկավարժական համակազմի աշխատողներին և սովորողներին:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ վերահսկողությունը հանձնարարել ԵՊՀ ուսումնամեթոդական վարչության պետին (Հ. Գ. Ժամհարյան) և գիտակրթական ստորաբաժանումների ղեկավարներին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ